



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի
ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում»

Առարկան՝ **Ֆիզիկա**

Հետազոտող ուսուցիչ՝ **Անահիտ Իսրայելյան**

Ուսումնական հաստատություն՝ **Արագածոտնի մարզ ՈԻՀի
Ն.Աղբալյանի անվան միջն դպրոց**

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն.....
2. Գտական ակնարկ
3. Գործնական համատեքստ.....
4. Արժեքային համակարգ.....
5. Եզրակացություն.....
6. Գլխակնություն.....

Մարդկանց նախատելու իրավունք ունենալու ապա նրանց ուղղելու համար պետք է նախ և առաջ սիրել մարդկությունը :

Դյուկլու

Եթե գոյություն չունենային այնպիսի կետեր,
որտեղ չհասվեին բոլորի շահերը, խոսք անգամ
չէր կարող լինել որևէ հասարակության մասին:

Ժան Ժակ Ռուսո

Հարց- Ի՞նչ դեր ունի հանրակրթական դպրոցը աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա:

1. Ներածություն

Ինչպես հայտնի է, նյութական և հոգևոր արժեքների միջև տարբերությունը պայմանական է, քանի որ ցանկացած նյութական արժեք միաժամանակ իր վրա կրում է կրթական մշակութային, կրթական, ազգային, կրոնական պատմական արժեքների կնիքը: Երեխայի դաստիարակության առաջնային խնդիրներից է համապատասխան արժափայլի համակարգի ձևավորումը, որն անհնարին է հիմնավորել առանց նշված համակարգի հստակեցման: Ինչպես հայտնի է, մարդու արժեփայլի համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Ակնհայտ է, որ երկրորդի դեպքում արժեփայլի համակարգի ձևավորումը տեղի է ունենում ավելի շատ տարերային ձևով: Այն չի կրում կազմակերպված բնույթ: Դժվար է ապացուցել ,որ այդ գործընթացը կառավարելի դարձնելով կարելի է հասնել դրական արդյունքի:

Մի բան է ձևավորել արժաֆների համակարգ ավտորիտար կառավարման ուժի տեսակյունից, մել ուրիշ բովանդակւոյուն է ստանում նելաժ գործընթացը ,էթէ այն նախագծւում և իրականացւում է դաստիարակւոյուն և կառավարման ժողովրդական ուժի տեսակյունից:

Գիտականւոյուն և գիտակցականւոյուն սկզբունքների կիրառման հնարավորւոյունները, քանի որ մարդու աշխարհահայացֆի, հոգևոր աշխարհի, մտածելակերպի ձևավորման գործում առանցքային նշանակւոյուն ունեն ինքնառեֆլեքսիան և քննադատական մտածողւոյունը: Գոյւոյուն ունեն արժեքների տարբեր դասակարգումներ:

Արժեքների դասակարգման տեսակյունից կարևորւում է ոչ միայն հոգևոր, այլև նյութական արժեքների նիշտ գնահատման, նանաչման հիմնախնդիրը: Անհրաժեշտ է ստեղծել համադատասխան մանկավարժահոգեբանական պայմաններ սովորողների օբյեկտիւ գնահատման մեխանիզմների մշակման համար: Տարբեր վիճակագրական ուսումնասիրւոյունները ցույց են տալիս, որ մարդկանց որոշակի խմբերի գիտակցւոյուն մեջ էրևան են գալիս արժեքների գնահատման նոր միտումներ, հատկապէս հասարակւոյուն համար անցումային վուլերում: Տեղի է ունենում հասարակւոյուն գիտակցւոյուն մակարդակում արժեքների վերաիմաստավորում (հին արժեքների թերագնահատում կամ գերագնահատում): ԽՍՀՄ-ի վիլուզումից հետո, նելաժ էրևույրը չորջանցեց էրևի ՀՀ-ի ոչ մի քաղաքացու: Գաղտնիք չէ, որ բնակչւոյուն լայն շերտերը այժմ կրում են այնպիսի արժեքների ազդեցւոյուն, որոնք հակասում են ավելի վաղ գոյւոյուն ունեցող համակեցւոյուն տրամաբանւոյունը:

«Արժեհամակարգ» հասկացւոյունը մանկավարժական գիտւոյուն մեջ ըմբռնւում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունւած է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակւոյունի և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքների բուրգի գագաթին գտնւող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրւոյունն է,որը լավագույն կերպով մատուցւում է տարբեր դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ էրբ դրսևորւում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործւոյուն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու,

տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների նյութերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինֆնատիվությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրազգային կամքը, ներքին գործությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարասեղելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրիս: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյափոփոխական արժանիքները:

Հայաստանի Հանրապետության ապագա ֆազաբացումն ուսումնատության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ֆանաչադական հմտությունները , հայոց ֆազաբացության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը

լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս

պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Դասավանդման ընթացքում, բացի գիտելիք տալուց և դաստիարակելուց պետք է կարողանալ սովորողների մոտ ձևավորել արժեքային համակարգ ևս: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսուցիչը իր յուրաքանչյուր դասաժամ պետք է կարողանա կազմակերպել, կապել

առօրյա կյանքի, կենցաղի (հիմք ընդունելով դասի թեման) բնության օրենքների ներդաշնակության, գեղեցկության, գիտատեխնիկական առաջընթացի ,մարդկային գործունեության հետ, կազմակերպել էֆեկտիվներ, արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ, վիկտորինաներ, զարգացնել սովորողի գեղագիտական հաշակը:

2. Գրական ակնարկ

ՀՀ - ուն ձևավորվել է ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հենվող քաղաքացիական հասարակություն: Կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլ համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհադասակարգի ժողովրդավարական, մշակութային, սոցիալական գործոններով: Պետության և ազգի անվտանգության հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Երեխաների դաստիարակչական ծրագրերի մեջ կարևոր տեղ պետք է գրավեն երեխաների բնույթի մեջ նկատված կամայականության, էգոիզմի,

երեսպատության, անարդարամտության, անտարբերության, չարության, ընչափադեղության և այլ անորակի երևույթների իսպառ վերակառուցումը: Հաղթահարել դրանք՝ կնժանակի վակել դրանց վարակի հանապարհը, փրկել ուրիշ երեխաների : Արդյունքում առաջացան դաստիարակության համակարգի կառուցման որոշակի նախադրյալներ և իրական հնարավորություններ: Դրանք իրենց մեջ ներառում են հետևյալ ասպեկտները.

- Բարոյական, որը ենթադրում է ոչ միայն տեսնել, հասկանալ և զգալ գիտության գեղեցկությունը, այլ նաև հասկանալ գիտության և տեխնոլոգիաների նվաճումների խելամիտ օգտագործման անհրաժեշտությունը՝ հանուն մարդկային հասարակության հետագա զարգացման և շրջակա միջավայրի պահպանության:
- Քաղաքացիական, որը ենթադրում է ակտիվ կենսադիրքորոշում ստեղծագործ անձի ձևավորում, որը հարգանքով է լցված գիտություն և տեխնիկա ստեղծագործների հանդեպ, որոնք ապահովում են ֆիզիկայի առաջատար դերը տեխնիկայի արդի աշխարհի ստեղծման գործում:
- Հայրենասիրական, որը ենթադրում է հայրենիքի, նրա հարստության և մշակութային ավանդությունների մասին տեղեկությունների ուսումնասիրում , որն օժանդակում է իր քաղաքի, գյուղի, ավանի հանդեպ սիրուն, դաստիարակում է իր երկրի քաղաքացուն:
- Առողջապահական , որը ենթադրում է գիտելիքների ձևավորում հանուն առողջ կենդանակերպի, մարդու և հասարակության անվտանգ կենսագործունեության ապահովման:

Անհերքելի է, որ դպրոցի հիմնական նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է: Այնուամենայնիվ, այս գործընթացը բավականաչափ ժամանակատար է ու հատուկ մասնագիտական որակներ է պահանջում ուսուցչից: Այս պարագայում ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքային համակարգի ձևավորման

ապահովման համար գտնել մատուցման արդյունավետ եղանակներ: Դասերին դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործունի գաղափարի օգտագործման վրա՝ որպես գիտության գործառնության որոշիչ սկիզբ:

Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների պաշարը կապահովեն սովորողի արժեհամակարգի ձևավորումը կրթության բովանդակության հետ միասին : Ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների հանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ համախառն են դրսևորվում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուսուցչությանը վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակալությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համատարբան, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Սովորողի ծանոթությունը նշանավոր գիտնականների կենսագրությունների հետ կապված նյութերին, վերլուծելով դրանք, հաղորդակցվում է ստեղծագործական գործունեության արժեքներին, ծանոթանում է իր մասնագիտության մեջ հաջողված աշխատանքի ազդրիքմներին, և արդյունքում մշակում է գիտական գործունեության, գիտական գիտելիքի և գիտության մասին իր սեփական կարծիքը: Այս ամենն անկասկած, դրականորեն կդրի սովորողի ակտիվության վրա, կդրդի նրան

պատասխանատվությամբ հետազոտելու ծրագրային նյութը: Նշենք այն պայմանները, որոնք ապահովում են ուսուցման դպրոցում կենսագրական նյութերի օգտագործման արդյունավետությունը:

- Նախ այդօրինակ տեղեկությունները պետք է նվազագույն լինեն իրենց բովանդակության ծավալով և ուսումնական ժամանակի ծախսերի առումով: Անհրաժեշտ է նախապես առանձնացնել նշանավոր ֆիզիկոսներին, որոնց կյանքն ու գործունեությունը պետք է ներկայացվի բիչ թե շատ հիմնավոր:

- Կենսագրական նյութը պետք է կապված լինի կոնկրետ նյութի հետ, ներառվի ընթացիկ նյութի շարադրման տրամաբանության մեջ: Անհրաժեշտ է սովորողների գիտակցությանը հասցնել այն, թե կոնկրետ ինչ է արել այս կամ այն գիտնականը, ինչպես էն նրա հայտնագործությունները կամ գյուտերը ծառայում մարդկության բարօրությունը

Կենսագրական նյութը պետք է խթանի ուսումնական բարդ նյութի յուրացումը: Այս դեպքում նոր նյութի մատուցումը պետք է սկսվի գիտնականի գյուտարարական տաղանդը, նպատակին հասնելու նրա աշխատասիրությունն ու համառությունը ցույց տվող անջնջելի, հուզականորեն հագեցած օրինակով: Օրինակ. նպատակահարմար է պատմել Ֆարադեյի կողմից էլեկտրամագնիսական մակաձման երևույթի հայտնագործությունը, կամ Պ. Կյուրիի կողմից ռադիոակտիվության հայտնագործությունը:

Հիմնարար տեսությունների և գիտափորձերի, հետազոտության մեթոդների ուսումնասիրության հիման վրա սովորողների մեջ ձևավորել պատկերացում առ այն, թե ինչպիսի դժվարությամբ են ձեռք բերվում, հիմնավորվում ու կառուցվում գիտական գիտելիքները, ձևավորվում համոզմունքներ աշխարհի գիտական պատկեր և մարդու համար նրա կարևորության մասի:

Աշխարհայացքային արժեքների ձևավորված համակարգը կարող է սովորողի ընդհանուր կուլտուրայի և բազմազան ու բարդ վերձարարական միջոցներով և ոչ պակաս տեսական մտակառուցումներով գիտելիքների աշխարհի միջև կամրջի դեր կատարել: Արդյունքում առարկայական գիտելիքների ու պատկերացումների աշխարհը ձեռք է բերում մշակույթի արժեք:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝

- Գիտակցել հեզգրիտ գիտությունների կարևորությունը և դրանց կիրառության արդյունավետությունն առօրյա կյանքում և աշխատանքում :
- Գնահատել ֆիզիկայի դերը համաճարակային մշակույթի , գիտատեխնիկական առաջընթացի զարգացման գործում:
- Կարևորել առարկայի դերը տրամաբանական մտածողության զարգացման գործում:
- Կարևորել մտավոր աշխատանքը , կարողանա նպատակներ և խնդիրներ դնել և դրանց հասնելու համար նպատակաուղաց գործողություն ծավալել:
- Կարևորել գրավոր և բանավոր խոսքի հստակությունը, հեզգրությունը, հակիրճությունը, մատչելիությունը:
- Գնահատել բնության ներդրումները, գեղեցկությունը:
- Զգուշ ստեղծագործական աշխատանքի , գեղագիտական հանույժ ստանա դրանից:
- Գնահատել մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա, կարևորել ֆիզիկայի դերը շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումների գործընթացում:
- Ունենա ազգային ինֆրագիտակցություն
- Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում,
- Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում իր ստացած գիտելիքներ ներդրումը,
- Գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը:
- Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն...

Արժեհամագարգի ձևավորմանը կարող են մեծապես նպաստել ինտեգրված դասերի անցկացումը: Ժամանակակից գիտությունը պահանջում է համալիր գիտելիքների կիրառում, որը հիմնված է միջգիտական կարևոր ու պահանջարկված փոխգործակցության մասին: Եթե միջառարկայական ինտեգրացումն ու փոխգործակցությունը

դպրոցում անհրաժեշտ մակարդակի վրա են, ապա դա, անկասկած, նպաստում է սովորողների մտավոր ստեղծագործական ունակությունների զարգացմանը, որն էլ մտածողության ինտեգրատիվ եղանակի զարգացման հիմք է դառնում, իսկ վերջինս հատկապես արագ զարգացող հասարակության մեջ վերին աստիճանի պահանջարկված է:

Իր գործունեության ընթացքում ուսուցիչը որպեսզի կարողանա սովորողի մոտ լիարժեք ձևավորի արժեքային համակարգ, անհրաժեշտ է առաջնորդվել կրթակարգի պահանջներով՝ անհետ փոփոխություններով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հնադարում Դեմոկրիտի, Թալեսի, Արիստոտելի, Կուպեոնիկոսի, Պյութագորասի Պտղեմիոսի, Դարվինի, Արֆիմեդի, Գալիլեյի, Կեպլերի, Պլանկի, Նյուտոնի և այլոց պարզազույն դիտումների և ընդհանրացումների հիման վրա ծնունդ առան բնական գիտությունները, որտեղ համակարգված են աշխարհի ու նրա օրենքների մասին, առանց որի ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացը հնարավոր չէր պատկերացնել: Ստեղծվեցին կիբեռնետիկական, տիեզերագիտությունը, ռադիոաստղագիտությունը, հրթիռային տեխնիկան, բժշկագիտությունը և այլ գիտություններ: Ձևավորվեցին բնական գիտությունների նոր ուղղություններ՝ ցածր ջերմաստիճանների ֆիզիկան, լագերային տեխնիկան, ջերմամիջուկային սինթեզը, պլազմային ֆիզիկան, զարգացավ կիսահաղորդչային էլեկտրոնիկան, հայտնաբերվեց տարբեր տարրական մասնիկների, միջուկային էներգիան լայն կիրառություն ստացավ խաղաղ նպատակներով: Ընդլայնվեցին պատկերացումներ տիեզերքի ու նրա կառուցվածքի մասին: Մեր օրերում աշխարհի առաջավոր գիտնականների համատեղ ուժերով բնական գիտությունների փառահեղ շենքը հզորանում , կատարելագործվում է, ծառայում մարդկանց բարօրությանն ու խաղաղության գործին: Նրանց կյանքը և գործունեությունը կարևոր է գիտության զարգացման մեջ, նրանց կենսագրությունը գիտության պատմության մի անփակտելի մասն է, դրանք մեկընդմիջոս ձուլվել են գիտնականների

գործերի հետ: Չէ՞ որ Նյուտոնը բանաձև չէ, Կեպլերը օրենք, Ամպերը հոսանքի ուժ չէ, Պտղեմիոսը տիեզերական համակարգ չէ, Կյուրին՝ ռադիոակտիվություն և այլն: Նրանք մարդիկ են, հակատագրեր, բնավորություններ: Նրանց օրենքները, հայտագործությունները իմանալուց բացի իմանալ՝ երջանիկ թե՞ դժբախտ, բարձրահասակ թե՞ կարճահասակ, մտայն թե՞ ուրախ մարդ են եղել: Հարց է առաջանում, միթե՞ կարևոր է այդ ամենը դասավանդման ընթացքում: Իհարկե

Բնագիտական առարկաների դասավանդման գործընթացում սովորողները լսելով տարբեր գիտական այրերի կենսագրություններ, կատարած հետազոտությունների և հայտնագործությունների մասին լրացուցիչ նյութեր, կկարողանան հաղորդակցվել ստեղծագործական գործունեության արժեքներին, ծանոթանալ հաջողված աշխատանքների ազդրիքներին, վերհիշել, մշակել նրանց գիտական գործունեության և գիտության մասին սեփական կարծիքներ:

Կենսագրական նյութը պետք է խթան հանդիսական ուսումնական բարդ նյութի յուրացմանը: Նոր նյութի մատուցումը պետք է սկսել գիտնականի գյուտարարական տաղանդի, պատմագիտական ուսումնասիրությունների անջնջելի, համառության, աշխատասիրության նպատակին հասնելու օրինակով:

Բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը կարելի է էլ ավելի խորացնել, օգտագործելով ցերեկույթները, էֆսկուրսիաները, երեկոները և ցուցահանդեսները: Բնապահպանական դաստիարակությանը հատկապես էներգաարդյունավետության ուսուցման համար անհրաժեշտ է ֆիզիկայի գործնական ժամերին կիրառել նախագծային մեթոդներ, որը միտված կլինի ուսուցման այլընտրանքային՝ նոր ձևերի ներդրմանն ու կիրառմանը: Ուսուցման գործընթացում մեր հիմնական գործը պետք է լինի աշակերտներին ուղղորդելը: Ոչ միշտ է հիշատարաստի նյութը նրանց մատուցելը: աշակերտները պետք է ունենան պրպտուն միտք և վարձեն ինֆորմացիոն նյութեր բերել և դասն ավելի հետաքրքիր դարձնել:

Առարկան արդյունավետ դասավանդելու համար, ես հաճախ եմ (գրեթե միշտ) թեմաներ կապում կյանքի հետ և ցույց տալիս, որ դրանք մեր կյանքի հիմքն են: Հաճախ պատմում եմ ավանդազրույցներ Օրինակ ջրի մասին, նրա ագրեգատային վիճակների մասին խոսել մեջբերել հունական փիլիսոփայության հայր Հերակլիտի խոսքերը ,կամ սաթի հատկությունները հետազոտել է անգլիացի բժիշկ և ֆիզիկոս Ուիլյամ Ջիլբերտը, որն անգլիայի Ելիսաբեթ I թագուհու անձնական բժիշկն էր: Ջիլբերտն եկավ մի կարևոր եզրակացության. մագնիսի և սաթի ձգողություններ տարբեր բնույթի են: Այլ կերպ ասած նրան հաջողվեց մագնիսական և էլեկտրական երևույթներն

առանձնացնել իրարից և միայն 1,5 դար անց անգլիացի մեկ ուրիշ գիտնականի՝ Ջեյմս Մաֆսվելին, հաջողվեց կրկին միավորել էլեկտրականություն ու մագնիսականությունը, բայց արդեն նոր հիմքի վրա: Այս ամենը լսելով աշակերտների հետաքրքրությունը աճում է թեմայի վերաբերյալ և հետագա հաղորդվող նյութն ավելի արագ են ընկալում: Հետևաբար արդարացված է ցանկացած մեթոդ, որը տանում է թեմայի հետաքրքրությունը բարձրացնելուն և այն ընկալելի դարձնելուն: Փիզիկայի ուսուցումը կատարվում է ինչպես ավանդական, այնպես էլ նոր մեթոդներով: Բայց մեր դպրոցը նյութատեսիսիկական բազայի հարստացման, վերագինման, արդիականացման խիստ կարիք ունի: Երբ այն վերածվի լաբորատոր հետազոտությունների կենտրոնի, կհասնենք լավ արդյունքի: Այստեղ ներկայացրել ենք հետազոտական միջամտության փորձարկումը ներառող դասապլաններս համապատասխան անդրադարձներով:

Հետազոտությունը կատարել ենք Արագածոտնի մարզի Ուշիկի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում, որտեղ սովորում են ուսումնառության տարբեր մակարդակների վրա գտնվող և տարբեր արդյունավետություն գրանցող աշակերտներ՝ 12 աղջիկ և 10 տղա: Սովորողներից սմանք արագ են ընկալում նոր նյութը, մյուսներից լրացուցիչ ժամանակ է պահանջվում է ընկալման համար, իսկ մի մասին էլ բացի ժամանակից լրացուցիչ միջամտություն է հարկավոր: Դասարանում կա նաև մեկ

աշակերտ, որը բավականին աշխույժ է, բայց ուժերը շատ քույլ է և չի մտապահում սովորածը փորձերին ներգրավվելիս է ոգևորվում: Այստեղ հաջող դասեր եղան, երբ խմբային աշխատանքներ անցկացրի՝ կիրառելով մեթոդներ ու հնարներ:

Դասարանը բաժանել ենք 4 խմբի՝ յուրաքանչյուր խմբին տալով համապատասխան լաբորատոր սարքեր՝ չափաֆանոն, չափազլան, ջերմաչափ, վարկյանաչափ, հանձնարարելով առաջադրանքներ: Հետևում էի խմբերի անհատական

առաջադրանքներին, ուղղորդում՝ շտկելով թյուրըմբռնումները: Նախ հարցադրումների միջոցով վերհիշեցինք թեման թե անդրադարձ կատարեցինք գրծիքների ոգտագործմանը, կիրառելով ու:

Վերլուծություն և դասի անդրադարձ: Առաջադրանքը ավարտելուց հետո սովորողները հաշվետվություն ներկայացրին, թե ինչը ինքնուրույն արեցին, ինչում օժանդակություն ստացան, ինչը լավ չէին յուրացրել, ինչ պարզեցին իրենց համար, ինչը մնաց անհասկանալի: Անհասկանալի հարցերը նորից բացատրվեցին ուսման առաջավոր սովորողների կողմից և լրացումներ արվեցին իմ կողմից: Սովորողները գծապատկերներ արեցին, հավաքագրվեցին փորձի տվյալները,

կատարեցին համապատասխան հաշվարկներ և ստացած արդյունքները արձանագրեցին: Յուրաքանչյուր խմբի պատասխանատուն ներկայացրեց իր խմբի աշխատանքը: Առաջադրանքի ամրապնդման համար կազմել ենք աշակերտների

կողմից լրացված հարցաթերթիկների պատասխանները: Այս գործնական աշխատանքը տարբեր առաջընթաց ունեցող սովորողների համար և՛ հետաքրքիր է, և՛ պարունակում է խմբերի սովորողներին համապատասխան վերլուծություններ, որոնց միջոցով գնահատվում է սովորողների ըմբռնումը բացահայտվում և շտկվում թյուրըմբռնումները:

Այս գործնական աշխատանքը տարբեր առաջընթաց ունեցող սովորողների համար և՛ հետաքրքիր է, և՛ պարունակում է խմբերի սովորողներին համապատասխան վերլուծություններ, որոնց միջոցով գնահատվում է սովորողների ըմբռնումը բացահայտվում և շտկվում թյուրըմբռնումները: Աշխատանքի ընթացքում ակնհայտորեն արտացոլվում էր միմյանց օգնելու, գորցիֆներից զգուշությամբ օգտվելու, միմյանց նկատմամբ հարգանքի դրսևորումը:

Այսպիսով, կարող եմ արձանագրել, որ ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առարկաները՝ այդ թվում ֆիզիկան, կարող է սովորողի մեջ ձևավորել բարձր արժեքային համակարգ, իսկ այս հարցում ուսուցիչը պետք է ամեն բան անի, որ կարողանա ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել, որ ստանա առավելագույն արդյունք:

Կցանկանալիմ ավելացնել, նաև, որ սույն աշխատանքը մեծ չափով կօգնի մեզ մեր մանկավարժական հետագա գործունեության ընթացքում, որպեսզի էլ ավելի կառուցողական մոտենանք սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի վերջո, կրթությունն ոչ միայն անհատի շահերից է բխում, այլ հասարակության և պետության շահերից: Այն միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության զիտելիքները, վտրձը, հոգևոր ժառանգությունը յուրացնելուն, հարստացնելուն և պահպանելուն: Ինչպես նաև դրանք սերունդներին փոխանցելուն: Մեր երկրում կրթությունը երկրի զարգացման և հզորացման, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաժիշի է:

Այսպիսով, արժեքները դատողություններ են այն մասին, թե ինչն է կյանքում կարևոր: Դրանք հասուկ համոզմունքներ են,

թե որն է նիւտոն ու սխալը: Իսկ ո՞րոնք են կյանքի իրական արժեքները:

- Անձը պետք է հարգի Հայաստանի խորհրդանիշերը, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

- Գիտակցի, որ ժամանակակից աշխարհում կրթությունը, գիտությունը, տեխնոլոգիաները մեծագույն արժեքներ են:

- Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստ, զգային այլ արժեքների կարևորության մասին:

- Լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ և կարևորի բարոյական չափանիշներն ու քրիստոնեական, ինչպես նաև համամարդկային արժեքները:

- Գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, դրսևորի արժանավայել պահվածք:

- Գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ դրսևորման կարևորությունը:

- Անաչառօրեն գնահատի սեփական ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումն ու գերագնահատումը:

- Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակաւացություն, արժևորի և գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

- Մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կիրառման գործում:

Ամփոփում

Ուսումնառության ընթացքում աշակերտն էլ իր հերթին պետք է .

- Գնահատի ֆիզիկայի դերը համամարդկային մշակույթի, գիտատեխնիկական առաջընթացի զարգացման գործում:

- Գիտակցի ֆիզիկայի դերը անհատի աշխարհայացքի ձևավորման գործում:

- Կարևորի ֆիզիկա առարկայի դերը տրամաբանական մտածողության, զարգացման գործում:

- Գիտակցի նեգրիտ գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունն առօրյա կյանքում և աշխատանքում:

- Կարևորի մտավոր աշխատանքը, կարողանա նպատակներ և խնդիրներ դնել և նպատակաուղաց գործունեություն ծավալել:

- Գնահատի բնության ներդաշնակությունն ու գեղեցկությունը:

- Զգտի ստեղծագործական աշխատանքի, գեղագիտական հաճույք ստանա դրանից:

- Գնահատի մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա:

- Կարևորի շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումների իրագործմանը:

- Հարգի ինքն իրեն, քանզի գիտությունը ոչ այլ ինչ է, քան բնության մարդկային հայելին, որն արտացոլում է նրան նախադրմանը բոլոր պահանջմունքները, հետաքրքրությունները, արժեքներն ու մտածողության ոճը

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսավորձի հիման վրա:

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են՝ **հավատն ու սերը**:

Հավատը ծնուն է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Մանկավարժները պիտի հաշվի առնեն, թե ինչ մեծ ազդեցություն ունի անհատի արժեքային կողմնորոշիչների վրա նյութական արժեքների թերագնահատումը կամ գերագնահատումը: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է հիշել, որ հոգևոր արժեքները կարող են դրական ազդեցություն ունենալ նյութական արժեքների վերագնահատման, վերաբաշխման վրա՝

բարեգործություն, մեկենասություն, և հակառակը՝ նյութական արժեքներն իրենց հերթին կարող են ազդել հոգևոր արժեքների ձևավորման վրա: Այսպիսով, մանկավարժների համար առաջնային խնդիր է դառնում նյութական և հոգևոր արժեքների ձևավորման ռազմավարության մշակումը՝ թե՞ դաստիարակության, թե՞ սոցիալականացման մակարդակներում:

1. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923>

ՀՀ Կառավարության որոշում

2. <https://escs.am/files/files/2020-07-15/cef0eb2e6c040db0cfde0da134e32084>

Հանրակրթական դպրոցի փիզիկա առարկայի չավորուելիք և ծրագիր:

3. <http://ijevanlib.y-su.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun>

Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005:

4. <https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna>

Ի. Փարենուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»:

5. [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mankavarjutyun/2008\(1-2\)](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mankavarjutyun/2008(1-2))

6. Հանրակրթության մասին օրենքը

7. Վիճակագրություն